ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 138-Ա
«10» ՀՈՒԼԻՍԻ 2023Թ
ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2335 որոշման 3-րդ և 7-րդ կետերով և հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2023 թվականի հունիսի 26-ի թիվ 02/09.1/15982-2023 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Եղեգնաձորի երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Արթուր Կարապետյանին 2023 թվականի հուլիսի 11-ին գործուղել ք. Երևան, հուլիսի 12-ին մասնակցելու արտադպրոցական ուսումնական հաստատություններում մանկավարժական և վարչական աշխատողների դասավանդման շաբաթական ծանրաբեռնվածությունը հստակեցնելու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում կազմակերպվող քննարկմանը:
2. Արթուր Կարապետյանի գործուղման հետ կապված ծախսերը (օրապահիկ, գիշերավարձ և ճանապարհածախս) կատարել համապատասխանաբար Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Եղեգնաձորի երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆինանսական միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով և կարգով:
3. Արթուր Կարապետյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել հաշվետվություն՝ գործուղման հետ կապված ծախսերի և գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

7/10/2023

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ք.Եղեգնաձոր